1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Բասեն գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող՝ 08-084-0101-0023 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 0,32399 հեկտար հինգերորդ կարգի, անջրդի վարելահողը գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, 5600 /հինգ հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ տարեկան վարձավճարով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրել մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակից՝ Ռոբերտ Գևորգի Կանդալյանին, ն. քարտ՝ 009880535, տրված՝ 22.01.2018թ., 030-ի կողմից:

2. Օրենքով սահմանված կարգով Ռոբերտ Գևորգի Կանդալյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր 10 տարի ժամկետով:

3. Պարտավորեցնել Ռոբերտ Գևորգի Կանդալյանին տարեկան վճարումները կատարել եռամսյակային կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



2. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«16» ապրիլի 2024 թվական
գյուղ Ախուրյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ**

«16» ապրիլի 2024 թվականի թիվ 416-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՄԱՐՄԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԲՆԱԿԻՉՆԵՐ՝ ԱՆԱՀԻՏ ԱՐԹՈՒՐԻ
ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԵՎ ԱՐԵՆ ԱՐԹՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված <<Խնամակալության և հոգաբարձության մարմինների>> կանոնադրության 3-րդ գլխի 9-րդ մասի 1-ին կետի ա) ենթակետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ, 37-րդ և 38-րդ հոդվածների դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 12-ի նիստի արձանագրության դրական եզրակացությունը և երեխաների տատիկ՝ Անահիտ Վոլոդյայի Գրիգորյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մարմաշեն գյուղի անչափահաս բնակիչներ՝ Անահիտ Արթուրի Ավետիսյանի /ծնված՝ 2011 թվականի մայիսի 31-ին/ և Արեն Արթուրի Ավետիսյանի /ծնված՝ 2015 թվականի փետրվարի 27-ին/ նկատմամբ խնամակալ նշանակել տատիկին՝ Անահիտ Վոլոդյայի Գրիգորյանին:
2. Սույն որոշման կատարման կազմակերպումը ու պատասխանատվությունը դնել Ախուրյան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նախագահի տեղակալի վրա:
3. Սույն որոշման կատարման վերահսկողությունը վերապահել Ախուրյան համայնքի Մարմաշեն բնակավայրի վարչական ղեկավարին:
4. Սույն որոշման մեկ օրինակը տրամադրել Անահիտ Վոլոդյայի Գրիգորյանին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

16 ապրիլի 2024 թվական
գյուղ Ախուրյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ**

«16» ապրիլի 2024 թվականի թիվ 417-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՐԵՎԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ
113,15 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՏՎԱԾԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ԱՌԱՆՁՆԱՅՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ «ԱՐԵՎ-ՎԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 38-րդ կետի «բ» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 16-ի թիվ 19-Ա, 2024 թվականի փետրվարի թիվ 13-Ա որոշումները,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Արևիկ բնակավայրի 7-րդ փողոց, 5/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, հասարակական նշանակության շենքի 113,15 քառակուսի մետր մակերեսով, 08-020-0030-0018 կադաստրային ծածկագրով հատվածն ու շենքի սպասարկման և պահպանման համար առանձնացված 0,01666 հեկտար մակերեսով հողամասն (գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 10042024-08-0055), տրված 2024 թվականի ապրիլի 10-ին, անհատույց օգտագործման իրավունքով, 10 (տաս) տարի ժամկետով տրամադրել «Արև-Վան» բարեգործական հիմնադրամին՝ անվճար կրթական ծրագրեր և արտադպրոցական ու ոչ ֆորմալ կրթություն իրականացնելու նպատակով:
2. «Արև-Վան» բարեգործական հիմնադրամի հետ կնքել գույքի անհատույց, 10 տարի ժամկետով օգտագործման պայմանագիր:
3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները պետական գրանցման նպատակով ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



2. ՄԱՆՈՒԿՅԱՆ

16 ապրիլի 2024 թվական
գյուղ Ախուրյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 418-Ա

«16» ապրիլի 2024 թվական

գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-077-0018-0012 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՅԻ ԱՂՈՒՆԻԿ ՄԱՐՏՈՒՆԻԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի «Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 19-ի թիվ 56-Ա որոշումը և հաշվի առնելով որ ինքնական շինությունն իրականացրած, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մայիսյան գյուղի բնակիչ՝ Աղունիկ Մարտունիկի Առաքելյանը, իր 2024 թվականի մարտի 7-ի դիմումով ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված 89,1 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը և շվաքարանը, 54,81 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով հացատունը և անասնաշենքը, ինչպես նաև դրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականությունը հանդիսացող 08-077-0018-0012 կադաստրային ծածկագրով 0,09971 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական

նշանակության հողամասի նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով ձեռք բերելու առաջարկությունը, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարված, ինքնակամ կառուցված և օրինական ճանաչված 89,1 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը և շվաքարանը, 54,81 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով հացատունը և անասնաշենքը, ինչպես նաև դրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող 08-077-0018-0012 կադաստրային ծածկագրով, 0,09971 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը (անշարժ գույքի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ Ախուրյան համայնք, գյուղ Մալիսյան 6-րդ փողոց, 4-րդ նրբանցք, 4 բնակելի տուն, իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 12032024-08-0048) ուղղակի վաճառքով, գնման նախապատվության իրավունքով՝ 842936 (ութ հարյուր քառասուններկու հազար ինը հարյուր եոթսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով, որից՝ 329429 (երեք հարյուր քսանինը հազար չորս հարյուր քսանինը) Հայաստանի Հանրապետության դրամը շինության արժեքն է, իսկ 513507 (հինգ հարյուր տասներեք հազար հինգ հարյուր յոթ) Հայաստանի Հանրապետության դրամը՝ հողամասի, օտարել կառուցապատողին՝ քաղաքացի Աղունիկ Մարտունիկի Առաքելյանին:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված վաճառքի ընդհանուր գնին հավելել տվյալ գույքային միավորի նկատմամբ, մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:
3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Աղունիկ Մարտունիկի Առաքելյանին պատշաճ ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«16» ապրիլի 2024 թվական

գյուղ Ախուրյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 419 -Ա

«16» ապրիլի 2024 թվական

գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ ՏՈՒՆ 12 ՀԱՍՑԵԻ 08-068-0004-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Էլմիրա Արշալույսի Սերոբյանը (ծնված 29/01/1972 թվական) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ համասեփականության իրավունքով իրենց ընտանիքին պատկանող Հովիտ բնակավայրի 1-ին փողոց, 1 նրբանցք, տուն 12 հասցեի 08-068-0004-0006 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,11854 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի վրա առկա ինքնակամ համարվող բնակելի նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Համասեփականության իրավունքով Ալեքսան Անուշավանի Սերոբյանին, Էլմիրա Արշալույսի, Լիլիթ և Հայկ Ալեքսանի Սերոբյաններին պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հովիտ բնակավայրի 1-ին փողոց, 1 նրբանցք, տուն 12 հասցեի հողամասի վրա գտնվող ինքնակամ կառույց համարվող 266,61 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, նկուղը, բաց պատշգամբը, հացատունը, անասնաշենքը և շվաքարանը կառուցվել են 1990 թվականին (2001 թվականի մայիսի 15-ից առաջ): Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2024S8YCKH ծածկագրով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշման 2-րդ կետի, «Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի դրույթներով, համաձայն նույն որոշման կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերի և 22.1 կետի պահանջների, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հովիտ բնակավայրի 1-ին փողոց, 1 նրբանցք, տուն 12 հասցեի հողամասի վրա գտնվող ինքնական կառուցված 266,61 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, նկուղը, բաց պատշգամբը, հացատունը, անասնաշենքը և շվաքարանը ճանաչել օրինական առանց վճարների գանձման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի համասեփականատերերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«16» ապրիլի 2024 թվական

գյուղ Ախուրյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ**

«18» ապրիլի 2024 թվականի թիվ 420-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ՔԵԹԻ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-119-0137-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,5005 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ 1441,44 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՎԱՐՏ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՅԻ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՆԻ ԱՎԱՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Քեթի բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն համարվող 08-119-0137-0005 կադաստրային ծածկագրով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը և դրա վրա գտնվող անավարտ շինությունն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու և օտարման մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին» թիվ 34-Ա որոշումը և 2024 թվականի ապրիլի 4-ին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանում կայացած հողամասի աճուրդով վաճառքի արդյունքների մասին 2024 թվականի ապրիլի 4-ին կազմված թիվ 1 և թիվ 2 արձանագրությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարվող, 08-119-0137-0005 կադաստրային ծածկագրով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Քեթի բնակավայրի, Արտադրական բազայի փողոց, 5 հասցեի 0,5005 հեկտար մակերեսով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը և դրա վրա առկա 1441,44 քառակուսի մետր մակերեսով անավարտ շինությունը 2 835 000 (երկու միլիոն ութ հարյուր երեսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամով օտարել աճուրդի արդյունքում հաղթող ճանաչված մասնակից, քաղաքացի՝ Արթուր Մարտինի Ավայանին և կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
- Պարտավորեցնել գնորդին՝ սահմանված ժամկետում կատարել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

18 ապրիլի 2024 թվական
գյուղ Ախուրյան



2. ՄԱՆՈՒԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 421-Ա

«18» ապրիլի 2024 թվական

գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի ԹԻՎ 336-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2024 թվականի ապրիլի 16-ի թիվ Կ-16042024-08-0197 որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2024 թվականի մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի 5-րդ փողոց 18 հասցեի 08-004-0008-0002 կադաստրային ծածկագրով հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շենք շինությունները օրինական ճանաչելու մասին» թիվ 336-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
- 1) Որոշման նախաբանի երկրորդ պարբերությունում «Արա, Ժանետա, Անդրանիկ և Անահիտ» բառերը փոխարինել «Արա և Ժանետա» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«18» ապրիլի 2024 թվական
գյուղ Ախուրյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 422-Ա

«18» ապրիլի 2024 թվական

գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՄԱՐՄԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 51-ՐԴ ՓՈՂՈՑ 13 ՀԱՍՑԵԻ 08-078-0067-0003

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Արտակ Գրիգորի Սարգսյանը (ծնված 15/07/1980 թվական) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ ժառանգության իրավունքով (հիմք ժառանգության վկայագրեր 604-20240409-84-7846731) իրենց ընտանիքին բաժնային սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մարմաշեն գյուղի, 51-րդ փողոց, 13 հասցեի, 0,249766 հեկտար մակերեսով, 08-078-0067-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա առկա ինքնակամ կառուցված շինությունները օրինական ճանաչելու խնդրանքով:

Բաժնային սեփականության իրավունքով Լիդա Ավետիքի, Արտակ և Արթուր Գրիգորի Սարգսյաններին պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մարմաշեն գյուղի, 51-րդ փողոց, 13 հասցեի հողամասի վրա գտնվող, ինքնակամ կառուցված 93.19 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը, բաց պատշգամբը, նկուղը և շվաքարանը կառուցվել են 2017 թվականից 2020 թվականը (2001 թվականի մայիսի 15-ից հետո): Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2024TG6VMV ծածկագրով:

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշման 2-րդ կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն

որոշման 1-ին կետի դրույթներով, համաձայն նույն որոշման կարգի 8-րդ 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերի և 13-րդ կետի և ա) և բ) ենթակետերի, 18-րդ կետի դ) ենթակետի պահանջների, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների (Գգ) սահմանված չափը՝ որը Մարմաշեն գյուղի (Շիրակի մարզ, 16-րդ գոտի) համար 0,0874 է և հիմք ընդունելով Արտակ Գրիգորի Սարգսյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մարմաշեն գյուղի, 51-րդ փողոց, 13 հասցեի հողամասի վրա գտնվող, ինքնական կառուցված 93.19 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը, նկուղը, և շվաքարանը, ինչպես նաև ինքնական բացված թվով երկու պատուհանները, բացված թվով մեկ դուռը և փակված թվով մեկ դուռը ճանաչել օրինական սահմանված վճարների դիմաց:
2. Սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված բնակելի նշանակության շինությունների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի, ինչպես նաև ինքնական բացված թվով երկու պատուհանների, բացված թվով մեկ դուռն և փակված թվով մեկ դուռն օրինականացման համար սահմանել 10000 դրամ, իսկ օժանդակ շինությունների համար 6000 դրամ և կիրառել շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության 0,0874 գործակիցը:
3. Շինությունների օրինականացման ինչպես նաև ինքնական բացված թվով երկու պատուհանների, բացված թվով մեկ դուռն և փակված թվով մեկ դուռն համար հաշվարկված ընդհանուր վճարը կազմում է 80427 (ութսուն հազար չորս հարյուր քսանյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 3-րդ կետով սահմանված գումարը չվճարելու դեպքում՝ որոշումն համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի բաժնային սեփականատերերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
6. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՆՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ



«18» ապրիլի 2024 թվական

գյուղ Ախուրյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 423 -Ա

«18» ապրիլի 2024 թվական

գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-007-0968-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐԹՈՒՐ ԶԻՎԱՆԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 12-ի թիվ 85-Ա որոշումը և հաշվի առնելով որ ինքնակամ շինությունն իրականացրած, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան գյուղի բնակիչ՝ Արթուր Զիվանի Մաթևոսյանը, իր 2024 թվականի մարտի 29-ի դիմումով ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված 3,98 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով հասարակական նշանակության մատուղը, աստիճանահարթակը և 8,65 քառակուսի մետր մակերեսով բնակելի նշանակության պարիսպները, ինչպես նաև դրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականությունը հանդիսացող 08-007-0968-0003 կադաստրային ծածկագրով 0,005655 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով ձեռք բերելու առաջարկությունը, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարված, ինքնական կառուցված և օրինական ճանաչված 3,98 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով հասարակական նշանակության մատուռը, աստիճանահարթակը և 8,65 քառակուսի մետր մակերեսով բնակելի նշանակության պարիսպները, ինչպես նաև դրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող 08-007-0968-0003 կադաստրային ծածկագրով, 0,005655 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը (անշարժ գույքի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան Պարույր Սևակի փողոց, 1/2 շինություն, իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 29032024-08-0052) ուղղակի վաճառքով, գնման նախապատվության իրավունքով՝ 133270 (մեկ հարյուր երեսուներեք հազար երկու հարյուր յոթանասուն) դրամ արժեքով, որից՝ 64222 (վաթսունչորս հազար երկու հարյուր քսաներկու) դրամը շինության արժեքն է, իսկ 69048 (վաթսունինը հազար քառասունութ) դրամը՝ հողամասի, օտարել կառուցապատողին՝ քաղաքացի Արթուր Զիվանի Մաթևոսյանին:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված վաճառքի ընդհանուր գնին հավելել տվյալ գույքային միավորի նկատմամբ, մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:
3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արթուր Զիվանի Մաթևոսյանին պատշաճ ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«18» ապրիլի 2024 թվական

գյուղ Ախուրյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

« 19 » ապրիլի 2024 թվականի թիվ 424

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ՝ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԽՈՐԸ ԱՍՏԻՃԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՈՎ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ
ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ԱՐՏՅՈՄ ԱՐՏՈՒՇԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան գյուղի բնակիչ Արտյոմ Արտուշի
Պետրոսյանը (անձնագիր՝ AR06408333, տրված 28.03.2018թ., 001 կողմից, հաշվառված
է ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան, Շրջկենտրոն, շենք 11, բն.19 հասցեում հասցեում) դիմում
է ներկայացրել Ախուրյանի համայնքի ղեկավարին, խնդրելով՝ ՀՀ Կառավարության 2018
թվականի դեկտեմբերի 6-ի N 1419-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան
իր մեկ անձից բաղկացած ընտանիքին Ախուրյան համայնքում վերցնել բնակարանային
հաշվառման:

2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և
իրավական հիմնավորումներ՝

1) ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան, Շրջկենտրոն, շենք 11, բն.19 հասցեում հաշվառված
Արտյոմ Արտուշի Պետրոսյանը հիվանդացել է 21.08.1999թ. զին. ծառայության
ընթացքում, ունի ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով (1-ին խմբի)
հաշմանդամություն (հիմք՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության
նախարարության ՍՊՎ 05.02.2024 թվականի թիվ 36/184 տեղեկանքը):

2) Արտյոմ Արտուշի Պետրոսյանը հաշվառված է ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան,
Շրջկենտրոն, շենք 11, բն.19 հասցեում: ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի
ղեկավարի 2010 թվականի սեպտեմբերի 6-ի N 61 որոշմամբ «ՀՀ Շիրակի մարզ
Ախուրյան, Շրջկենտրոն, շենք 11, բն.19» հասցեն վերահասցեավորվել է «ՀՀ Շիրակի
մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Զրաշինարարների փողոց 2-րդ անցուղի 4
շենք, բնակարան 10», որտեղ և մինչ օրս հաշվառված է Արտյոմ Արտուշի Պետրոսյանը:

Նա նշված հասցեի բնակարանի նկատմամբ չունի սեփականության իրավունք, բնակարանի սեփականատերերն են՝ Սենիկ Պետիկի Հակոբյանը և Նորվարդ Վլադիմիրի Հակոբյանը, որոնք որևէ ազակցական կապ չունեն Արտյոմ Արտուշի Պետրոսյանի հետ:

Արտյոմ Արտուշի Պետրոսյանը ժամանակավորապես բնակվում է ՀՀ Շիրակի մարզ Արթիկ համայնք գյուղ Հոռոմ 11-րդ փողոց 1-ին նրբանցք 7 տուն հասցեում, սեփականության իրավունքով իր քրոջ ամուսնուն՝ Վահագն Մաթևոսի Հայրապետյանին պատկանող բնակելի տանը:

Նա սեփականության իրավունքով չունի բնակարան կամ այլ բնակելի տարածություն (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի 07.02.2024թ. N ԱՏ-07022024-99-0281 և 20/03/2024թ. N ԱՏ-20032024-99-0182 տեղեկանքները և ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի բնակարանային հարցերի հանձնաժողովի եզրակացությունը):

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի ու հատուկ ստորաբաժանումների՝ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» N 1419-Ն որոշմամբ սահմանված կարգի 8-րդ և 9-րդ կետերի դրույթներով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայող Արտյոմ Արտուշի Պետրոսյանին մեկ անձով ընդգրկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի բնակարանային պայմանների բարելավման կարիքավորների ցուցակում:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի բնակիչ Արտյոմ Արտուշի Պետրոսյանին պատշաճ իրազեկել սույն որոշման մասին՝ վերջինիս տրամադրելով սույն որոշման օրինակը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտյոմ Արտուշի Պետրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդ օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

« 19 » ապրիլի 2024 թ.
գ. Ախուրյան



2. ՄԱՆՈՒԿՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 425-Ա**

«19» ապրիլի 2024 թվական

գյուղ Ախուրյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի ԹԻՎ 323-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2023 թվականի մայիսի 2-ի թիվ Կ-02052023-08-0164 որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 13-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Երազգավորս գյուղի 2-րդ փողոց թիվ 75 հասցեի 08-037-0006-0014 կադաստրային ծածկագրով հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու մասին» թիվ 323-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
- 1) Որոշման նախաբանի երկրորդ պարբերությունում «24,86 քառակուսի մետր ներքին մակերեսով հարթակը և 3,98 քառակուսի մետր մակերեսով պարիսպը» բառերը և թվերը փոխարինել «24,86 քառակուսի մետր ներքին մակերեսով հարթակը» բառերով և թվերով, «և 2,26 քառակուսի մետր մակերեսով պարիսպը» բառերը և թվերը փոխարինել «և 6,24 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպները» բառերով և թվերով:
- 2) Որոշման 1-ին կետում «ներքին մակերեսով հարթակը» բառերից հետո «և 3,98 քառակուսի մետր մակերեսով պարիսպը» բառերը և թվերը հանել:
- 3) Որոշման 2-րդ կետում «և 2,26 քառակուսի մետր մակերեսով պարիսպը» բառերը և թվերը փոխարինել «և 6,24 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպները» բառերով և թվերով:

- 4) Որոշման 3-րդ կետում «12474 (տասներկու հազար չորս հարյուր յոթանասունչորս)» բառերը և թվերը փոխարինել «14249 (տասնչորս հազար երկու հարյուր քառասունինը)» բառերով և թվերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«19» ապրիլի 2024 թվական
գյուղ Ախուրյան

